IDBank

2026

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026

Բովանդակություն

3 | Բանկի մասին համառոտ

14 | Մակրոտնտեսական ակնարկ

17 | Ֆինանսական հաշվետվություն

24 | Ռազմավարական հաշվետվություն

30 | Ռիսկերի կառավարում

35 | Պատասխանատու անձանց հայտարարություն

01

Բանկի մասին համառոտ

- IDBank-ը մեկ հայացքով
- Բանկի կառավարման մարմինները
- Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները
- Մեր ձեռքբերումները
- Բանկը՝ որպես հաշվետու թողարկող

IDBank-ը Հայաստանի նորարար զարգացող բանկերից մեկն է և արդեն 35-ամյա գործունեության փորձ ունի բանկային համակարգում:

1990

2018
«Անելիք Բանկ» ՓԲԸ-ն վերանվանվեց «ԱյԴի Բանկ» ՓԲԸ, որդեգրվեց թվայնացման ռազմավարությունը: Սկսվեց ռազմավարական համագործակցություն «Իդրամ»-ի հետ

2019
Idram&IDBank համատեղ թվային հարթակի գործարկում

2020
Rocket line հեղափոխական ապառիկի գործարկումը՝ օֆլայն և առցանց POS համակարգերում և թվային վճարումների ոլորտում

2022
FISTOCO LTD-ն դարձավ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի 100% բաժնետեր

2022
1 մլն-ից ավել Rocket line թվային ապառիկի գործարք

2023
Հայաստանում բոլոր անկանխիկ վճարումների ավելին քան 30%-ի ապահովում՝ քանակով և ծավալով

2023
ID Group-ը դարձավ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի 100% բաժնետեր

2024
idcoin՝ նոր թվային հավատարմության հարթակի ներդրում

2024
Moody's-ի կողմից «IDBank»-ի վարկանիշի բարձրացում

2025
IDBank-ը միացել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Բանկային Ասոցիացիային (BACEE)

2025
Վարկանիշի բարձրացում S&P Global Ratings-ի կողմից

2026
Ներկայուցչական գրասենյակ ԱՄՆ-ում

IDBank

2026 թվականի առաջին կիսամյակի արդյունքները՝

Ակտիվներ	Պարտավորություններ	Ավանդներ, Հաշիվներ
536 մլրդ ՀՀ դրամ	441 մլրդ ՀՀ դրամ	283 մլրդ ՀՀ դրամ

Կապիտալ	Զուտ շահույթ	ROE
96 մլրդ ՀՀ դրամ	10,2 մլրդ ՀՀ դրամ	*22.5%*

BNPL լուծումների առաջատար

Գործարքներով առաջատար

Բանկի թվային էկոհամակարգի միջոցով իրականացվող գործառնություններն ապահովում են ՀՀ անկանխիկ վճարումների մոտ 1/4 մասը, ինչը հավաստում է IDBank-ի տեխնոլոգիական հզորությունն ու շուկայական զգալի կշիռը:

Մեր հաճախորդները՝

Կորպորատիվ բանկային հաճախորդներ	Մանրածախ բանկային հաճախորդներ
41,5 հազար	767 հազար

Հաճախորդների մասնաբաժինը թվային ուղիներում
78.2%

Ակտիվ քարտեր՝ 567,4 հազ.

“Գնիր հիմա, վճարիր հետո”
POS տերմինալներ՝ 26,9 հազ.

Բանկն ունի 19 մասնաճյուղից կազմված ցանց ՀՀ-ում և ներկայացուցչություն ԱՄՆ-ում: Անձնակազմը բաղկացած է 1,109 աշխատակցից:

Խորհրդի անդամները

Արթուր Ջավադյան
Խորհրդի նախագահ-
Խորհրդի անկախ անդամ

Բանկային ոլորտում ավելի քան 35 տարվա փորձ ունենալով՝ Արթուր Ջավադյանը զբաղեցրել է ղեկավար հաստիքներ Հայաստանի մի շարք բանկերում և վճարահաշվարկային կազմակերպություններում, իսկ 1997-2020թթ. ՀՀ Կենտրոնական Բանկում զբաղեցրել է Խորհրդի անդամի, ՀՀ ԿԲ նախագահի խորհրդականի, նախագահի տեղակալի, ապա՝ նախագահի պաշտոնները:
Որպես ԿԲ նախագահ 2008-2020թթ. ընթացքում հանդիսացել է «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ, «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ, «ԱՔՌԱ» վարկային բյուրոյի, «ԱրՔա» համակարգի, «Հայինկասացիա» ՓԲԸ խորհրդի նախագահ, Հայաստանի ֆոնդային բորսայի խորհրդի անդամ:
2020 թվականից հատուկ հանձնարարություններով ՀՀ դեսպանն է: **2022 թվականից հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի Խորհրդի անդամ, իսկ 2024 թվականից Խորհրդի նախագահն է:**
Արթուր Ջավադյանը 1981-1986թթ. սովորել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի մեքենայացման ֆակուլտետում՝ որպես ինժեներ մեխանիկ, իսկ 1987-1989թթ. սովորել է «Հայգյուղմեքենայացում» ԳԱՄ ասպիրանտուրայում: Վերապատրաստվել է Միջազգային ֆինանսների ճապոնական կենտրոնում (2002), Տորոնտոյի վերին ղեկավարության միջազգային կենտրոնում (2001), Շվեյցարիայի Կենտրոնական բանկի ուսումնական կենտրոնում (1998), Նյու-Յորքի Ամերիկյան բանկային գործի ինստիտուտում (1994), մասնակցել է Տնտեսական և բանկային ոլորտին վերաբերող միջազգային մի շարք սեմինարների (2000–2020):
Իր գործունեության ընթացքում Արթուր Ջավադյանը ստացել է մի շարք պարգևատրումներ, մասնավորապես՝
Անանիա Շիրակացու մեդալ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար», 2-րդ աստիճանի մեդալ «Ռազմական համագործակցության համար» մեդալ Ղրղզստանի Ազգային բանկի կողմից, մեդալ «Համագործակցության համար», Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի կողմից պատվոգիր՝ արդյունավետ համագործակցության համար, պատվավոր պատվոգիր՝ ԵՎՐԱԶԵՍԻ ինտեգրացիոն կոմիտեին առընթեր Արժեթղթերի շուկայի կարգավորման գծով լիազորված մարմինների ղեկավարների խորհրդի խնդիրների իրականացմանը ակտիվ մասնակցության, բարձր պրոֆեսիոնալիզմի և անձնական ներդրման համար:

Կարեն Մարգարյան
Խորհրդի անկախ անդամ-
Խորհրդին կից կոմիտեի նախագահ

Կարեն Մարգարյանը տնտեսագիտության դոկտոր է, տեխնիկական գիտությունների թեկնածու՝ ավելի քան 37 տարվա փորձով ղեկավար պաշտոններում: Ունի գիտական կոչումներ և հեղինակ է տնտեսագիտության ու կառավարման վերաբերյալ ավելի քան հիսուն գիտական աշխատությունների: Կարեն Մարգարյանը նաև արձակագիր է՝ Մարկ Արեն գրական անունով, և նրա գրչին են պատկանում ավելի քան քսան վեպեր, որոնցից մի քանիսը էկրանավորվել են:
Ունի ավելի քան 40 տարվա փորձ ղեկավար պաշտոններում:
Ներկայումս Երևանի Հայ-ռուսական համալսարանի մեդիայի, գովազդի և կինոյի ինստիտուտի տնօրենն է: 2022թվականից GFN.AM-ի հիմնադիրն ու գործադիր տնօրենն է:
2024 թվականից «ԱյԴի Լիզինգ» ՈՒՎԿ ՍՊԸ խորհրդի նախագահն է և «Հայփոստ» ՓԲԸ խորհրդի անդամ:
1971-1976թթ. Կարեն Մարգարյանը սովորել է Երևանի պոլիտեխնիկական համալսարանում: Տեխնիկական գիտությունների թեկնածու է: 2005-2006թթ. սովորել է Մոսկվայի պետական կառավարման համալսարանում:
Ներկայումս տնտեսագիտության դոկտոր է:
2016 թվականից հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ:

Խորհրդի անդամները

Անդրեաս Բլազե
Խորհրդի անկախ անդամ

Անդրեաս Բլազեն ունի 15 տարվա բազմազան փորձ մասնավոր կապիտալի, ներդրումային բանկային գործունեության, տեխնոլոգիաների, մանրածախ առևտրի, ավտոմոբիլային և կառավարման խորհրդատվության ոլորտներում, մասնավորապես՝ ներդրումների, պորտֆելի կառավարման, թվային փոխակերպման և գործառնական կառավարման մեջ:
2024թ. հունվարից Բլազեն հանդիսանում է AURELIUS Wachstumskapital-ի (Գերմանիա) գործառնական գործընկեր՝ շարունակելով օգտագործել իր լայնածավալ առաջնորդական և ռազմավարական հմտությունները: Զբաղեցրել է առանցքային պաշտոններ CECONOMY AG-ում և եղել է Ֆեդերալ-Մոգուլ (ԱՄՆ) Միաձուլումների և ձեռքբերումների ու ռազմավարության տնօրեն:
2003-2007 թվականներին Անդրեաս Բլազեն սովորել է Օտտո Բայսհայմի անվան կառավարման դպրոցում (WHU): Բիզնեսի կառավարման մագիստրոսի դիպլոմ է ստացել WHU–Օտտո Բեյշեյմի կառավարման դպրոցից:
2024 թվականից հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ:

Ելենա Խաչվանքյան
Խորհրդի անկախ անդամ-Խորհրդին կից կոմիտեի անդամ

Ելենա Խաչվանքյանը ֆինանսների և ռազմավարական կառավարման փորձագետ է՝ մեծ փորձառությամբ պետական ֆինանսների, պետական կառավարման և կորպորատիվ կառավարման ոլորտներում: Նա խորհրդատու է մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպություններում և կարևոր ներդրում է ունեցել Հայաստանում իրականացվող բազմաթիվ բարեփոխումների մշակման և իրականացման գործում:
Նրա մասնագիտական ուղին ներառում է նաև երկարամյա աշխատանք մասնավոր հատվածում՝ խոշոր ընկերությունների ֆինանսական կառավարման և բիզնես խորհրդատվության ոլորտներում:
2000–2005թթ. Ելենան ուսանել է Հայ-ռուսական պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում, իսկ 2005–2007թթ.՝ նույն համալսարանի ասպիրանտուրայում:
Նա ունի մի շարք միջազգային որակավորումներ.
•Եվրոպական տնօրենների ասոցիացիաների կոնֆեդերացիայի (ecoDa) ծրագրի Եվրոպական խորհրդի դիպլոմ,
•Ռազմավարական կառավարում և առաջնորդություն դիպլոմ՝ Մեծ Բրիտանիայի Կառավարիչների լիցենզավորված ինստիտուտից (CMI),
•Երդվյալ Հավատարմագրված Հաշվապահների Ասոցիացիա (ACCA),
•Հանրային քաղաքականության վերլուծության սերտիֆիկատ՝ Լոնդոնի Տնտեսագիտության դպրոցից (LSE),
Ներկայումս, որպես Տնօրենների հայկական ինստիտուտի նախագահ, նա նպաստում է կորպորատիվ կառավարման բարձր չափանիշների և թափանցիկության մշակույթի ամրապնդմանը՝ թե՛ հանրային, թե՛ մասնավոր հատվածում:
2024 թվականից հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ:

Ֆերնանդո Կաստինեիրաս
Խորհրդի անկախ անդամ

Ֆերնանդո Կաստինեիրասը ֆինանսական և կառավարման փորձառու խորհրդատու է՝ ավելի քան երեք տասնամյակ միջազգային փորձով: Նրա մասնագիտական ուղին ընդգրկում է ռազմավարական ներդրումների, կապիտալի կառավարման և կորպորատիվ կառավարման ոլորտներ: Նա նաև IC-A՝ Իսպանիայի տնօրենների խորհրդի ասոցիացիայի անդամ է:
1988–1990թթ. սովորել է Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանում՝ ստանալով տնտեսագիտության բակալավրի կոչում: 2002թ. Մադրիդի պոլիտեխնիկական համալսարանի Հեռահաղորդակցության ինժեներների բարձրագույն դպրոցի Տեղեկատվական համակարգերի կառավարման մագիստրատուրայում սովորելով՝ ստացել է մագիստրոսի կոչում: 1999 – 2003 թթ. սովորել է Warwick Business School-ում: 2018թ. մասնակցել է Global CEO ծրագրին, որն իրականացվել է IESE (Իսպանիա), Wharton Business School-ի (ԱՄՆ) և CEIBS-ի (Չինաստան) կողմից:
1990թ. միացել է Arthur Andersen-ին Մադրիդում՝ ունենալով երկու տարվա փորձ որպես դրամական շուկայի գործակալ:
1996-2002թթ. ձեռնարկել է չորս տարվա միջազգային փորձի ծրագիր, ներառյալ իր աշխատանքը Լոնդոնի Գլոբալ ներդրումային բանկային խմբում:
2002թ. նա համահիմնադրել է Management Solutions (MS) միջազգային խորհրդատվական ընկերությունը: 2016 թվականից հանդիսանում է Athos Capital, SGEIC, S.A.-ի հիմնադիր, նախագահ ու գործադիր տնօրեն: Ներկայումս զբաղեցնում է տնօրենի պաշտոն Athos Capital-ի ցանցի ներքո գտնվող կազմակերպություններում: IC-A (The Instituto de Consejeros-Administradores) բիզնեսների և կազմակերպությունների տնօրենների խորհուրդների իսպանական ասոցիացիայի անդամ է:
2024 թվականից հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ:

Վարչության անդամները

Միեր Աբրահամյան
Վարչության նախագահ

1997թ.-ին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի Կառավարման և տնտեսական հարաբերությունների ֆակուլտետը, իսկ 2004թ.-ին՝ ԱՄՆ-ի Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցը:
Ունի Լիազորված ֆինանսական վերլուծաբանի (CFA) I, II մակարդակների որակավորում:
1999թ.-ից աշխատել է ՀՀ ԿԲ-ում՝ դրամավարկային քաղաքականության դեպարտամենտում որպես տնտեսագետ, ավագ տնտեսագետ, մակրոտնտեսագետ:
2007 - 2012թթ. աշխատել է որպես ՀՀ ԿԲ ֆինանսական համակարգի կարգավորման վարչության բանկային համակարգի կարգավորման բաժնի պետ:
2012 - 2018թթ. զբաղեցրել է Ֆինանսական համակարգի կարգավորման վարչության պետի պաշտոնը:
2019 թվականից առ այսօր IDBank-ի վարչության նախագահն է:

Կարեն Նալբանդյան
Բիզնեսի զարգացման տնօրեն

Ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը՝ «Մեխանիկա և մաթեմատիկա» մասնագիտությամբ՝ ֆինանսական և ակտուարական մաթեմատիկա մասնագիտությամբ:
2017 թվականի հոկտեմբերին նա ստանձնել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում բիզնեսի զարգացման տնօրենի պաշտոնը :
Ունի ավելի քան 24 տարվա միջազգային փորձ ֆինանսների և ներդրումների ոլորտում:

Արման Ասատրյան
Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն

Ավարտել է Երևանի Պետական Տնտեսագիտական Ինստիտուտի «Ընդհանուր տնտեսագիտություն» ֆակուլտետը «Համաշխարհային էկոնոմիկա» մասնագիտությամբ:
2017 թվականին նշանակվել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Գործառնական տնօրեն, Վարչության անդամ: 2020 թվականի ապրիլի 6-ին նշանակվել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Ֆինանսական տնօրեն: 2024 թվականի հունվարի 1-ից նշանակվել է Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն:
Ունի ավելի քան 28 տարվա աշխատանքային փորձ ֆինանսաբանկային ոլորտում:

Լիլիթ Սարգսյան
Ֆինանսական տնօրեն

Ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ մագիստրոսի աստիճան ստացել է Թբիլիսիի Տնտեսագիտության միջազգային դպրոցում (ISET): Ունի Certified Financial Modeling & Valuation Analyst (FMVA®) որակավորման հավաստագիր: 2012-2021թթ.-ին աշխատել է ֆինանսաբանկային ոլորտում, 2021թ-ից միացել է IDBank-ին: 2024թ. հոկտեմբերից ստանձնել է IDBank-ի ֆինանսական տնօրենի պաշտոնը:
Ունի ավելի քան 15 տարվա փորձ ֆինանսաբանկային ոլորտում:

Արթուր Համբարձումյան
Ռիսկերի կառավարման գծով տնօրեն

Ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը:
Ունի Financial Risk Manager (FRM I) որակավորման հավաստագիր:
2007թ.-ից IDBank-ում զբաղեցնում է տարբեր ղեկավար պաշտոններ:
2023թ. նոյեմբերից ստանձնել է IDBank-ի ռիսկերի կառավարման գծով տնօրենի պաշտոնը:
Ունի ավելի քան 19 տարվա փորձ ֆինանսաբանկային ոլորտում:

Վարչության անդամները

Լիլիթ Գրիգորյան
Գործառնական տնօրեն

Ավարտել է ԵՊՀ-ի Տնտեսագիտության ֆակուլտետը և հետագայում ստացել ՀՊՏՀ-ի ֆինանսների և վարկերի մագիստրոսի կոչում: Նա ունի CMI 7-րդ մակարդակի վկայական, CMgr FCMI որակավորում:
1998-2000 թթ. աշխատել է ՀՀ ԿԲ-ում, իսկ 2000-2002 թթ.՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ում: 2002-2020 թթ «Ակբա Բանկ» ՓԲԸ-ում զբաղեցրել է տարբեր պաշտոններ, ներառյալ Քարտային կենտրոնի պետ, այնուհետև՝ հեռավար և թվային բանկինգի ծառայությունների վարչության պետ: 2020-2022 թթ. աշխատել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում՝ որպես Գործառնական ծառայության ղեկավար, այնուհետև՝ Գործառնական տնօրեն:
2022 թ.-ից զբաղեցնում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի գործառնական տնօրենի պաշտոնը:

Վահան Յոլյան
Կորպորատիվ բիզնեսի տնօրեն

2001-2007 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանում և ստացել ֆիզիկայի մագիստրոսի աստիճան:
2011 թվականին ավարտել է Երևանի Մ. Մաշտոցի անվան համալսարանը և ստացել ֆինանսների բակալավրի աստիճան:
2008 թվականից աշխատել է «Ինեկոբանկ ՓԲԸ»-ում որպես վարկային մասնագետ:
2013 և 2019 թվականներին նույն բանկում զբաղեցրել է բաժնի ղեկավարի, իսկ այնուհետև ծառայության ղեկավարի պաշտոնները:
2025թ.-ից «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ում զբաղեցնում է կորպորատիվ բիզնեսի տնօրենի պաշտոնը:
Ունի ավելի քան 18 տարվա փորձ ֆինանսաբանկային ոլորտում:

Սերգեյ Առաքելյան
Թվային Բանկինգի տնօրեն

Ավարտել է Երևանի Պետական Համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետը, իսկ ավելի ուշ ստացել է Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Արդյունաբերական ճարտարագիտության և համակարգերի կառավարման մագիստրոսի կոչում:
2018թ.-ի հունվարին ստանձնել է Թվային Բանկինգի տնօրենի պաշտոնը:
Ունի ֆինանսական համակարգերի թվային փոխակերպման և զարգացման 11 տարվա, իսկ հեռահաղորդակցության ոլորտում՝ ավելի քան 10 տարվա փորձ:

Անուշիկ Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ

Ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի Ֆինանսական հաշվարկների բաժինը և նույն բաժնի ասպիրանտուրան:
2017 թ.-ի օգոստոսի 9-ին նշանակվել է գլխավոր հաշվապահ և դարձել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի Վարչության անդամ:
Ունի ավելի քան 27 տարվա աշխատանքային փորձ ֆինանսաբանկային ոլորտում:

Բանկի առաքելությունը

Լինել առաջին ընտրության բանկ՝ ընդլայնելով մեր հաճախորդների հնարավորությունները և առաջարկելով նրանց աճող կարիքներին համապատասխան նորարար լուծումներ:

Բանկի տեսլականը

Դառնալ առաջատար թվային բանկը Հայաստանում՝ ընդլայնելով մեր նորարարական, հաճախորդամետ գործունեությունը:

Բանկի արժեքները

Նորարարություն - Նորարար լինելը մեր ԴՆԹ-ում է: Մենք միավորում ենք ֆինանսները և տեխնոլոգիաները՝ մեր հաճախորդների կյանքը հարստացնելով բարձրորակ, անվտանգ և արագ ծառայություններով:

Թափանցիկություն - Բիզնեսում մենք թափանցիկ ենք ու ազնիվ և անսասան էթիկական չափանիշներով ենք առաջնորդվում մեր թիմի, հաճախորդների, գործընկերների և բաժնետերերի հետ բոլոր հարաբերություններում:

Հաճախորդամետություն - Մեր հաճախորդները մեր գործունեության կենտրոնում են: Մենք առաջնահերթություն ենք տալիս նրանց կարիքներին՝ տրամադրելով անհատականացված փորձառություն և ապահովելով նրանց գոհունակությունը:

Թիմ - Մեր հարստությունը մեր մարդիկ են: Մենք խրախուսում ենք մեր թիմին աշխատել ոգևորությամբ և լինել ստեղծարար՝ շարունակաբար զարգացնելով իրենց հմտությունները և իրացնելով ողջ պոտենցիալը:

Սոցիալական պատասխանատվություն - Կայուն զարգացման մեր հանձնառությամբ օգնում ենք նվազեցնել բնապահպանական և սոցիալական ռիսկերը՝ հավաստիանալով, որ մեր գործունեությունը երկարատև դրական ազդեցություն կթողնի համայնքի վրա:

Ba2 | կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշ (CRRs)
Ba3 | տեղական արժույթով և արտարժույթով ներդրվող ավանդների երկարաժամկետ վարկանիշ

BB- | երկարաժամկետ էմիտենտի վարկային վարկանիշ
B | կարճաժամկետ էմիտենտի վարկային վարկանիշ՝ «կայուն հեռանկարով»

IDBank-ը առաջին հայկական բանկերից մեկն է, որն առաջարկում է
SWIFT global payment innovation (gpi) ծառայություններ

IDBank- ը առաջին հայկական բանկն է, որը պաշտոնապես միացել է
Առևտրի Միջազգային Պալատին (ԱՄՊ)

ԲՄԿ սկզբունքներին հանձնառություն՝ համապատասխանեցնելով
IDBank- ը միջազգային կայունության չափանիշներին և շուկայական լավագույն փորձին

Բանկը միացել է ֆինանսների և առևտրի բանկային միությանը (BAFT)՝
միջազգային համագործակցության զարգացման շրջանակներում

IDBank-ը պաշտոնապես միացել է **Կենտրոնական և**
Արևելյան Եվրոպայի բանկային ասոցիացիային (BACEE)

Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվել են AMX-ում և ներառված են պարտատոմսերի հիմնական Abond և Bbond ցուցակներում

IDBank-ը՝ **VISA քարտերի** խոշոր թողարկողներից Հայաստանում

IDBank-ն արժանացել է **Commerzbank-ի STP Excellence Award 2025 մրցանակին**

Բանկն իր պատմության ընթացքում առաջին անգամ թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր 2016 թվականին: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվում են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը:

2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Բանկը հաջողությամբ իրականացրել է 4 պարտատոմսերի թողարկում:

	մարտ	մարտ	հունիս	հունիս
Թողարկման ընդհանուր ծավալը	5 մլն ԱՄՆ դոլար	2,5 մլրդ ՀՀ դրամ	2,5 մլրդ ՀՀ դրամ	5 մլն ԱՄՆ դոլար
Տարեկան եկամտաբերությունը	5%	10%	10%	5%
Մարման ժամկետ	36 ամիս	36 ամիս	36 ամիս	27 ամիս

Թողարկված պարտատոմսեր (մլրդ ՀՀ դրամ)



2026 թվականի առաջին կիսամյակում թողարկված պարտատոմսերից առաջնային շուկայում տեղաբաշխվել են մոտ 6,5 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 2 մլրդ 478 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր:

2026 թվականի առաջին կիսամյակի դրությամբ երկրորդային շուկայում շրջանառվում են IDBank-ի կողմից իրականացված 5 թողարկումների պարտատոմսերը, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 25 մլն ԱՄՆ դոլար և 7,5 մլրդ ՀՀ դրամ:

Պարտատոմս ձեռք բերելիս ներդրողը հիմնականում կրում է հետևյալ ռիսկերը՝

| Շուկայական ռիսկ (Տոկոսադրույքի ռիսկ, Արտարժութային ռիսկ և այլն),
| Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ,
| Գնաճի ռիսկ

30/06/2026թ. դրությամբ շուկայում ներդրողի ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել:

02

Մակրոտնտեսական ակնարկ

- ՀՀ տնտեսությունը
- ՀՀ ֆինանսական համակարգը

Տնտեսական ակտիվության ցուցանիշ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Գնաճ (տարեկան,%)*



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Միջին փոխարժեքներ



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Վերաֆինանսավորման դրույքաչափ (%)



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

** Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ*

Բանկերի վարկերը ըստ արժույթների, մլրդ ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Բանկերի ավանդները (ներառյալ՝ հաշիվները) ըստ արժույթների, մլրդ ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի միջին տոկոսադրույք



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

1 տարուց ավելի ժամկետայնությամբ ավանդների միջին տոկոսադրույք



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

03

Ֆինանսական հաշվետվություն

- Ֆինանսական արդյունքների ամփոփում
- Ֆինանսական հաշվետվություններ

Ընդամենը ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)



Հաճախորդներին տրված վարկեր ու փոխառություններ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը պարտավորություններ (մլրդ ՀՀ դրամ)



Վարկային պորտֆելի աճի տեմպ



Ընդամենը կապիտալ (մլրդ ՀՀ դրամ)



Վարկային պորտֆելի կառուցվածք %



Տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Զուտ տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Միջնորդավճարների և այլ վճարների եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Գործառնական եկամուտ (մլրդ ՀՀ դրամ)



Շահույթ հարկումից հետո (մլրդ ՀՀ դրամ)



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ միջանկյալ հաշվետվություն

2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ

	01/04/2026-30/06/2026 հազ. դրամ	01/01/2026-30/06/2026 հազ. դրամ	01/04/2025-30/06/2025 հազ. դրամ	01/01/2025-30/06/2025 հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	11,884,075	23,382,268	9,654,019	18,810,907
Տոկոսային ծախս	(4,536,824)	(8,849,906)	(3,376,359)	(6,425,196)
Զուտ տոկոսային եկամուտ	**7,347,251**	**14,532,362**	**6,277,660**	**12,385,711**
Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	5,189,015	9,534,528	3,927,724	7,420,425
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	(3,308,303)	(6,066,715)	(2,655,669)	(5,064,223)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ	**1,880,712**	**3,467,813**	**1,272,055**	**2,356,202**
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	3,008,859	5,630,707	2,527,077	5,627,636
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով	298,074	8,475	136,509	471,723
Զուտ իրացված օգուտ/(վնաս) ներդրումային արժեթղթերի գծով	28,957	50,820	17,675	(50,091)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս	335,163	604,216	363,189	699,692
Այլ գործառնական եկամուտ	352,581	786,921	680,805	916,765
Այլ գործառնական ծախս	(255,953)	(523,369)	(344,274)	(593,960)
Գործառնական եկամուտ	**12,995,644**	**24,557,945**	**10,930,696**	**21,813,678**
Ֆինանսական գործիքների գծով արժեզրկումից զուտ կորուստներ	(1,008,286)	(1,819,986)	(674,248)	(1,372,797)
Արժեզրկումից այլ կորուստներ	(12,343)	(16,060)	-	-
Անձնակազմի գծով ծախսեր	(2,846,578)	(5,643,940)	(2,662,262)	(5,048,909)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,453,794)	(4,788,607)	(1,922,713)	(3,752,637)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**6,674,643**	**12,289,352**	**5,671,473**	**11,639,335**
Շահութահարկի գծով ծախս	(1,114,455)	(2,138,222)	(992,836)	(2,066,396)
Շահույթ տարվա համար	**5,560,188**	**10,151,130**	**4,678,637**	**9,572,939**
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս)՝ առանց շահութահարկի				
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս				
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.				
իրական արժեքի զուտ փոփոխություն	44,549	86,037	(34,509)	(6,804)
շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	(23,745)	(41,672)	(8,208)	53,588
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	20,804	44,365	(42,717)	46,784
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս) տարվա համար՝ առանց շահութահարկի	**20,804**	**44,365**	**(42,717)**	**46,784**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	**5,580,992**	**10,195,495**	**4,635,920**	**9,619,723**

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Ղեկավարության կողմից.

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ միջանկյալ հաշվետվություն

2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ

	30/06/2026 հազ. դրամ	31/12/2025 հազ. դրամ
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	50,174,569	52,994,857
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	31,448,799	13,149,503
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	80,278,672	86,687,688
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	281,989	174,136
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
Բանկի կողմից պահվող	18,062,615	15,240,979
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
Բանկի կողմից պահվող	31,906,388	34,531,152
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված	4,476,492	15,382,593
Հաճախորդներին տրված վարկեր	292,420,545	269,263,771
Առգրավված ակտիվներ	987,981	1,129,881
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	8,427,652	7,823,436
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	11,416,458	10,725,025
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	2,891,409	3,071,303
Այլ ակտիվներ	3,473,593	2,458,842
Ընդամենը ակտիվներ	**536,247,162**	**512,633,166**
Պարտավորություններ		
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	6,008,058	16,388,262
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	88,554,786	89,235,049
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	2,418	20,207
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	282,777,008	259,762,570
Ընթացիկ հարկային պարտավորություններ	820,160	1,590,228
Թողարկված պարտքային արժեթղթեր	29,566,042	24,932,848
Հետաձգված հարկային պարտավորություն	985,829	705,397
Այլ փոխառու միջոցներ	19,974,012	21,537,322
Վարձակալության գծով պարտավորություններ	3,329,124	3,494,448
Այլ պարտավորություններ	8,615,549	9,548,154
Ընդամենը պարտավորություններ	**440,632,986**	**427,214,485**
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	51,025,719	51,025,719
Էմիսիոն եկամուտ	5,014,099	5,014,099
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	674,542	630,177
Չբաշխված շահույթ	38,899,816	28,748,686
Ընդամենը սեփական կապիտալ	**95,614,176**	**85,418,681**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**536,247,162**	**512,633,166**

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Ղեկավարության կողմից.

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ միջանկյալ հաշվետվություն

2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ

	01/01/2026–30/06/2026 հազ. դրամ	01/01/2025–30/06/2025 հազ. դրամ
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	23,115,161	17,955,174
Վճարված տոկոսներ	(7,428,403)	(5,902,711)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ	9,534,528	7,420,425
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ	(6,066,715)	(5,064,223)
Զուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով	242,900	558,728
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	5,630,707	3,646,721
Այլ ստացված եկամուտ	234,910	33,040
Անձնակազմի գծով ծախսեր և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(9,384,554)	(8,084,408)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	(381,721)	(727,414)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(18,344,373)	(147,481)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(1,961,163)	(11,834,341)
Հաճախորդներին տրված վարկեր	(27,886,860)	(24,968,593)
Առգրավված ակտիվներ	226,028	341,033
Այլ ակտիվներ	5,244,192	283,744
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)		
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	707,919	10,217,924
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(10,339,284)	27,405,003
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	27,826,696	9,261,095
Այլ պարտավորություններ	(439,096)	(1,792,211)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը	**(9,469,128)**	**18,601,505**
Վճարված շահութահարկ	(2,637,596)	(3,125,000)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր	**(12,106,724)**	**15,476,505**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի (ձեռքբերում)/վաճառք	(3,053,257)	1,853,467
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի (ձեռքբերում)/մարում	13,245,647	13,375,445
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների (ձեռքբերում)/վաճառք	(1,857,880)	231,627
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	**8,334,510**	**15,460,539**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից	8,981,668	4,466,937
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(3,677,660)	(4,873,846)
Մուտքեր ներգրավված միջոցներից	7,054,712	1,461,316
Ներգրավված միջոցների մարում	(8,573,721)	(2,098,673)
Վճարված շահաբաժիններ	-	(10,500,000)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(319,540)	(340,309)
(Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված)/ ֆինասավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր	**3,465,459**	**(11,884,575)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**(306,755)**	**19,052,469**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,515,817)	891,876
Ակնկալվող վարկային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	2,284	(4,979)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	**52,994,857**	**39,267,755**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	**50,174,569**	**59,207,121**

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Ղեկավարության կողմից.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ միջանկյալ հաշվետվություն

2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ

հազ. դրամ	Բաժնետիրական Կապիտալ	Էմիսիոն Եկամուտ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական Կապիտալ
Մնացորդը 2025թ.հունվարի 1-ի դրությամբ (ստուգված)	33,971,850	5,014,099	397,227	35,078,536	**74,461,712**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք					
Շահույթ ժամանակաշրջանի համար	–	–	–	9,572,939	**9,572,939**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս					
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	–	–	(6,804)	–	**(6,804)**
Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	–	–	53,588	–	**53,588**
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	–	–	46,784	–	**46,784**
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	–	–	**46,784**	–	**46,784**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	–	–	**46,784**	–	**46,784**
Հայտարարված շահաբաժիններ *(Ծան. 27)*	–	–	–	(7,000,000)	**(7,000,000)**
Մնացորդը 2025թ. հունիսի 30-ի դրությամբ	**33,971,850**	**5,014,099**	**444,011**	**37,651,475**	**77,081,435**
Մնացորդը 2026թ. հունվարի 1-ի դրությամբ (ստուգված)	51,025,719	5,014,099	630,177	28,748,686	**85,418,681**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք					
Շահույթ ժամանակաշրջանի համար	–	–	–	10,151,130	**10,151,130**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս					
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	–	–	86,037	–	**86,037**
Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	–	–	(41,672)	–	**(41,672)**
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	–	–	44,365	–	**44,365**
Ընդամենը այլ համապարփակ վնաս	–	–	**44,365**		**44,365**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	–	–	**44,365**	**10,151,130**	**10,195,495**
Հայտարարված շահաբաժիններ *(Ծան. 27)*	–	–	–	–	**–**
Մնացորդը 2026թ. հունիսի 30-ի դրությամբ	**51,025,719**	**5,014,099**	**674,542**	**38,899,816**	**95,614,176**

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Ղեկավարության կողմից.

04

Ռազմավարական հաշվետվություն

- Ռազմավարական ծրագրերի իրագործում
- Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Մեր ռազմավարական արդյունքները

808,000 հաճախորդ՝ Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչության մոտ 60%-ը

Թվային բանկինգի լիարժեք ֆունկցիոնալություն Հեռավար գրանցում և հաճախորդների նույնականացում սմարթֆոնի միջոցով

15 բանկերի և 18 վարկային հաստատությունների համար վճարային ագրեգատոր, համագործակցություն 1000+ ծառայությունններ մատուցողների հետ, ներառյալ. երկրի բոլոր հիմնական առցանց ծառայությունները և հանրային ծառայությունները

Անհպում QR վճարումներ մոտ 27 հազար ֆիզիկական վաճառակետերում, ներառյալ. սուպերմարկետներ, ռեստորաններ, սրճարաններ, խանութներ, հյուրանոցներ և այլն

Ապահով վճարում Հայաստանի ավելի քան 1000 առցանց խանութներում web QR -ի և բջջային դրամապանակի միջոցով

Ինտեգրված ստացիր հիմա, վճարիր հետո լուծումը՝ առցանց և QR վճարման տարբերակով գնումների և ծառայությունների համար՝ մոտ 27 հազար POS-ով, ներառյալ ավելի քան 13 հազար POS, որը տրամադրում է մինչև 12 ամիս Rocket line 0% անտոկոս վճարման հնարավորություն

567,4 հազ. ակտիվ քարտեր

Առաջատար դիրք Հայաստանում՝ միջազգային քարտերի թողարկման ոլորտում

P2P ակնթարթային դրամական փոխանցում հեռախոսահամարով և քարտի համարով Հայաստանում և արտերկրում

Idram Junior – Հայաստանում երեխաների և դեռահասների համար նախատեսված առաջին ֆինանսական հավելվածը՝ անհպում QR վճարումների և փոխանցումների ֆունկցիոնալությամբ

Id+ հավատարմության թվային հարթակ վիրտուալ բոնուսային և նվեր քարտերով առևտրով զբաղվողների և օգտատերերի համար, ինչպես նաև բոնուսային փոխանակում (աճուրդ)

Ներկայացուցչության բացում ԱՄՆ-ում

IDBank-ի միջազգային զարգացման կարևոր քայլերից մեկը դարձել է ԱՄՆ մուտքը: Բանկը 2025 թվականին ստացել է թույլտվություն՝ Միացյալ Նահանգներում ներկայացուցչություն բացելու համար: 2026 թվականի փետրվարից այն սկսել է գործել Գլենդել քաղաքում՝ աշխարհի ամենամեծ հայկական համայնքներից մեկի կենտրոնում:

ԱՄՆ-ում գործող գրասենյակը ներկայացնում է IDBank-ի ծառայությունները՝ հնարավորություն տալով հետաքրքրված անձանց ավելի հեշտությամբ օգտվել բանկային առաջարկներից. օրինակ՝ հեռավար բացել հաշիվ, ձեռք բերել անշարժ գույք Հայաստանում կամ օգտվել այլ ֆինանսական ծառայություններից:



Ամերիկյան հեղինակավոր Los Angeles Times պարբերականը անդրադարձել է հայկական IDBank-ին՝ ներկայացնելով Բանկի արագ զարգացումը, թվային վերափոխման հաջող փորձը և միջազգային ընդլայնման նոր փուլը:

IDDistributor նորարարական թվային հարթակ

IDBank-ը ներկայացնում է IDDistributor նորարարական թվային հարթակը, որը միավորում է վճարումների ավտոմատացումն ու շրջանառու կապիտալի հասանելիությունը մեկ ամբողջական լուծման մեջ: Նախաձեռնությունը համաֆինանսավորում է Հելվետաս շվեյցարական ինտերկոոպերացիայի RECONOMY ներառական և կանաչ տնտեսության զարգացման ծրագիրը:

IDDistributor-ը ժամանակակից ֆինանսական գործիք է, որը հնարավորություն կտա մատակարար կամ արտադրող կազմակերպությունների առաքիչներին ընդունել վճարումներ առևտրի կետերից՝ անվտանգ և ամբողջությամբ անկանխիկ եղանակով:

Գործիքը միաժամանակ լուծում է բիզնես համագործակցության երկու առանցքային խնդիր: Առաջինը՝ մատակարարների և առևտրի կետերի միջև հաշվարկների գործընթացի պարզեցում և թվայնացում՝ այն դարձնելով արագ, անկանխիկ և լիովին վերահսկելի: Երկրորդը՝ միկրո և փոքր բիզնեսների համար ֆինանսական ճկունության ապահովում՝ Rocket Distributor նախահաստատված վարկային սահմանաչափի միջոցով:

Հարթակը ոչ միայն պարզեցնում է մատակարարման պահին վճարման գործընթացը, այլև բարձրացնում է գործարքների թափանցիկությունը և արդյունավետությունը՝ նվազեցնելով կանխիկի շրջանառության հետ կապված ռիսկերը:

Արշավներ և լոյալության նախագծեր

2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Բանկն իրականացրել է մի շարք մարքեթինգային արշավներ՝ ուղղված հաճախորդների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը, գործարքային ակտիվության խթանմանը և ավելի հարմարավետ ու շահավետ ֆինանսական փորձառության ապահովմանը: Արշավների իրականացման ընթացքում առաջնահերթություն է տրվել այն հարթակներին, որտեղ առավել բարձր է թիրախային հաճախորդական խմբերի ակտիվությունը՝ նպատակ ունենալով ապահովել Բանկի առավել արդյունավետ ներկայությունը հաճախորդների համար կարևոր հաղորդակցման ուղիներում:

Հաճախորդների փորձառության շարունակական բարելավման նպատակով իրականացվել են մի շարք թիրախային արշավներ, որոնք միտված են եղել խրախուսելու առօրյա բանկային գործարքների կատարումը, ինչպես նաև ընդլայնելու պրեմիում սեգմենտի հաճախորդներին առաջարկվող ճամփորդական արտոնությունների շրջանակը:

Բացի այդ, QR վճարումների գործածության խթանման և օգտատերերի համար առավել հարմարավետ ու շահավետ փորձառության ապահովման նպատակով անցկացվել են թեմատիկ արշավներ՝ համապատասխանեցված հաճախորդների նախասիրություններին և սեզոնային պահանջարկին:



Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Փոքր քայլերից՝ մեծ փոփոխություններ. «Մի դրամի ուժը» 6 տարեկան է

2026 թվականին «Մի դրամի ուժը» նախաձեռնությունը նշում է գործունեության վեց տարին՝ ամփոփելով զգալի ազդեցություն ունեցող արդյունքներ:
Այս ընթացքում նախաձեռնության շրջանակում համագործակցություն է հաստատվել շուրջ ***45 հիմնադրամի և հասարակական կազմակերպության հետ, իրականացվել է 55-ից ավելի ծրագիր, իսկ ծրագրերի ընդհանուր բյուջեն հասել է մոտ 300 մլն դրամի****:*

2026-ի առաջին՝ **հունվար** ամսվա «Մի դրամի ուժի» կուտակված գումարը՝ 5.267.346 դրամ, ուղղվեց «Ուսումնական առաքելություն» բարեգործական կազմակերպությանը, պատերազմի մասնակիցների, նրանց ընտանիքի անդամների, սահմանամերձ բնակավայրերի բնակիչների և տեղահանված արցախցիների համար տարբեր մասնագիտական դասընթացների ապահովմանը:

2026 թվականի **ապրիլ** ամսվա ընթացքում հավաքված մի դրամները փոխանցվել են «Դավիթբեկյան խաղեր» ՀԿ-ին՝ Դավիթբեկյան խաղեր հասարակական կազմակերպությանը՝ Սյունիքում 14–17 տարեկան պատանիների համար կազմակերպվող մեկամսյա ռազմամարզական խաղերի իրականացմանը նպաստելու նպատակով:

«Մի դրամի ուժի» շրջանակում **փետրվարի** ընթացքում հավաքված 4.644.456 դրամը փոխանցվել է «Մաթեմիկ» ՀԿ-ին, որը կուղղվի երեխաների և երիտասարդների կրթական զարգացմանը, գիտելիքի տարածմանը և կազմակերպության առաքելության առաջխաղացմանը:

«Մի դրամի ուժը» նախաձեռնության **մայիս** ամսվա շահառուն «Վահե Մելիքսեթյան» հիմնադրամն էր: Կուտակված 5.260.220 դրամը հիմնադրամին հնարավորություն կտա կազմակերպել Վանաձորում անցկացվող վազքի կիսամարաթոնը՝ ակտիվացնելով մարզային կյանքը:

«Մի դրամի ուժը» նախաձեռնության 2026 թվականի **մարտ** ամսվա ընթացքում կուտակված 5.131.381 դրամը ուղղվեց «Սիմֆոնիկ անտառ» համերգի երկրորդ՝ ամփոփիչ փուլի իրականացմանը, ինչպես նաև նախորդ տարի մեկնարկած ծառատունկի ծրագրի ամբողջական իրականացմանը:

«Մի դրամի ուժը» նախաձեռնության 2026 թվականի **հունիս** ամսվա շահառուն «Դասավանդի՛ր, հանուն Հայաստանի» հիմնադրամն էր: 5.062.971 դրամն ուղղվելու է Ուսուցիչների առաջնորդության ծրագրի իրականացմանը:

05

Ռիսկերի կառավարում

- Հիմնական տնտեսական նորմատիվներ
- Ռիսկի ախորժակ
- Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ

Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1



Իրացվելիության ծածկույթի նորմատիվ Ն23



Զուտ կայուն ֆինանսավորման նորմատիվ Ն24



Բանկի ֆինանսական կայունությունը բնութագրող երկու ցուցանիշները` կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը, գտնվում են պահանջվող նվազագույն մեծությունից բարձր մակարդակում:

2026 թվականի 1-ին կիսամյակում Բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 17.2% (պահանջվող նվազագույն մեծությունը 11% է), իսկ իրացվելիության և զուտ կայուն ֆինանսավորման նորմատիվները` համապատասխանաբար 206.9% և 125.2% (պահանջվող նվազագույն մեծությունները համապատասխանաբար 100% են):

- Բանկի ռիսկերի կառավարման համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկն է ռիսկի ախորժակը:
- Ռիսկի ախորժակը ռիսկի առավելագույն մեծությունն է, որը Բանկը պատրաստ է կրել իր ռազմավարական նպատակներին հասնելու համար:
- Բանկի Ռիսկի ախորժակի ցուցանիշները հաշվի են առնվում Բանկի ռազմավարական ուղղությունների որոշման, նպատակների սահմանման, Կապիտալի համարժեքության ներքին գնահատման գործընթացի իրականացման, սթրես թեստավորման, նորմատիվային կապիտալի Բավարար մակարդակի և շահութաբերության ցանկալի մակարդակի ապահովման, ինչպես նաև այլ կառավարչական որոշումների կայացման ժամանակ:
- Բանկն իր ռիսկի ախորժակը հաշվարկում է այնպես որ հնարավոր կորուստները կարող է ծածկել սեփական կապիտալով՝ պահպանելով հիմնական տնտեսական նորմատիվները:
- Բանկը շարունակաբար զարգացնում է ռիսկի ախորժակի համակարգը՝ ներառելով նոր ռիսկեր և թարմացնելով մեթոդաբանությունը՝ համապատասխանեցնելով փոփոխվող տնտեսական միջավայրին, կարգավորող պահանջներին ու Բանկի ռազմավարական առաջնահերթություններին:

Վարկային ռիսկի կառավարում

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է ոչ միայն վարկային ռիսկի ախորժակի սահմանմամբ և Բանկի ընդհանուր պորտֆելի ռիսկայնության գնահատմամբ, այլև վարկառուների վարքագծի և վարկունակության գնահատման համար սքորինգային մոդելների մշակմամբ, վավերացմամբ և շարունակական կատարելագործմամբ՝ նպատակ ունենալ ներդնել նաև մեքենայական ուսուցման (ML) և արհեստական բանականության (AI) վրա հիմնված մոդելներ: Այս մոդելները հնարավորություն են տալիս ավտոմատացված և տվյալահեն գնահատականների միջոցով բարձրացնել վարկային որոշումների ճշգրտությունը և արագությունը՝ միաժամանակ նվազեցնելով մարդկային գործոնի ազդեցությունը և գործառնական ռիսկերը:

Վարկավորման գործընթացում առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկը վարկավորման գործընթացի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները՝

- վարկի նպատակայնության և մարման աղբյուրների առկայությունը
- գրավի առարկան և գրավի առարկայի զգայունությունը տնտեսական և շուկայական զարգացումների նկատմամբ, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցության սահմանաչափերին համապատասխանությունը
- պոտենցիալ վարկառուի գործունեության տնտեսական ոլորտի առկա իրավիճակը, այդ ոլորտում դիմորդի գործունեություն ծավալելու ուղղությամբ փորձառությունը, ոլորտում նրա դիրքը, ոլորտի մրցունակության աստիճանը և մրցակցությունը
- պոտենցիալ վարկառուի գործող բիզնեսի, գուտ համախառն եկամտի կայուն մակարդակի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը
- պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանումը

Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը, հաշվի առնելով շուկայում առկա տոկոսադրույքները, կատարում է տոկոսադրույքների գնահատում և համապատասխանեցում շուկայում գործող ցուցանիշներին, մշտապես վերահսկում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ճեղքվածքը, իսկ շուկայական տոկոսադրույքների փոփոխության դեպքում արագ արձագանքելով՝ նվազագույնի է հասցվում փոփոխության արդյունքում Բանկի համար հնարավոր կորուստների ռիսկը:

Արտարժութային ռիսկի կառավարում

Արտարժութային ռիսկի կառավարման նպատակով Բանկը իրականացնում է արտարժութային բաց դիրքերի կառավարում՝ հետևելով սահմանված արտարժութային ռիսկի կառավարման նորմատիվային և ուղենիշային ցուցանիշների սահմանաչափերի պահպանմանը:

Երկրի ռիսկի կառավարում

Այլ երկրներում գրանցված և/կամ փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ ակտիվային գործարքների կնքման, թղթակցային հաշիվների բացման և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների ստանձնման դեպքերում, տվյալ երկրի հետ առաջին անգամ գործարքի կնքման պահին, ինչպես նաև հետագայում Բանկը գնահատում է տվյալ կազմակերպության երկրի ռիսկը՝ հիմք ընդունելով միջազգային ռեյթինգային ընկերություններից մեկի (Moody's, Standard&Poor's, Fitch) կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշը և ներքին ընթացակարգով սահմանված սահմանաչափերը:

Համբավի ռիսկի կառավարում

Կառավարման նպատակն է բացահայտել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ բնականոն գործունեության ընթացքում բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքի առաջացման ուղղությունները և սահմանել Բանկի կողմից համբավի ռիսկի կանխարգելմանը/նվազեցմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները:

Ռազմավարական ռիսկի կառավարում

Բանկը նպատակաուղղված է ռազմավարական ռիսկերի վաղ հայտնաբերմանը և կանխարգելմանը՝ ապահովելու համար երկարաժամկետ կայուն զարգացումը: Այս նպատակով ներդրվել է Ռիսկի ախորժակի մոնիթորինգի համակարգ, որը թույլ է տալիս պարբերաբար գնահատել ռազմավարությամբ սահմանված ռիսկի ախորժակի և փաստացի ցուցանիշների համապատասխանությունը:
Ռիսկի ախորժակից շեղումների հայտնաբերման դեպքում Բանկը ձեռնարկում է նպատակային կառավարման և մեղմման միջոցառումներ, ներառյալ՝

- ռազմավարական առաջնահերթությունների վերանայում,
- ռիսկերի նվազեցման ուղղված ծրագրերի իրականացում,
- վերահսկողության և հաշվետվողականության մեխանիզմների ուժեղացում:

Այս մոտեցումը ապահովում է, որ Բանկի ռազմավարական ուղղությունները համահունչ լինեն իր ռիսկի հանդուրժողականության սահմաններին և նպաստում է կայուն մրցակցային դիրքի պահպանմանը շուկայում:

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը օրական կտրվածքով հետևում է ինչպես իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվներին (ընդհանուր, ընթացիկ, LCR, NSFR իրացվելիության նորմատիվներ), այնպես էլ վերջիններիս ներքին՝ ավելի խիստ սահմանաչափերին:
Բացի նշվածից, իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացնում է նաև Իրացվելիության ճեղքվածքի (GAP) մոդելի և սթրես-թեստավորման միջոցով:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկեր (ՓԼ/ԱՖ ռիսկեր)

Համակարգում ֆինանսական հանցագործությունները կանխելու և միջազգային պատժամիջոցների պահպանումն ապահովելու համար Բանկը միջոցներ է ձեռնարկել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համար, ներառյալ հաճախորդների պատշաճ ուսումնասիրությունը՝ կասկածելի գործարքները/գործարար հարաբերությունները բացահայտելու համար:
Բանկը ներդրել է ավտոմատացված ծրագրային լուծումներ (ինչպիսիք են Siron վերլուծական լուծումները, CRM և այլն)՝ ապօրինի գործողությունները իրական ժամանակում և պարբերաբար բիզնես հարաբերությունների ընթացքում արդյունավետորեն հայտնաբերելու և կանխելու, ինչպես նաև Բանկի գործունեությունը ՓԼ/ԱՖ պատժամիջոցների կանոնակարգերին համապատասխան պահելու նպատակով:

Գործառնական ռիսկի կառավարում

Բանկը գործում է «կանխարգելումից մինչև արագ արձագանք» սկզբունքով՝ ապահովելու համար գործառնական ռիսկերի արդյունավետ կառավարումը: Այս նպատակով իրականացվում է ռիսկերի մշտադիտարկում, տեղի ունեցած գործառնական պատահարների վերաբերյալ տվյալների բազայի համալրում և խաբեության ռիսկի հայտնաբերում:
Բանկը մշակել է գործառնական ռիսկի, այդ թվում զեղծարարության ռիսկի հանդուրժողականության ցուցանիշներ (ռիսկի ախորժակ), որոնց սահմանված շեմերից կախված իրականացվում են համապատասխան վերահսկողական ու կանխարգելիչ միջոցառումներ՝ ռիսկի ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով:
Բանկը նախատեսում է ներդնել արհեստական բանականության (AI) և մեքենայական ուսուցման (ML) վրա հիմնված գործիքներ՝ գործառնական ռիսկերի ավտոմատացված հայտնաբերման, վերլուծության և դասակարգման համար: Այս տեխնոլոգիաները հնարավորություն կտան

- իրական ժամանակում բացահայտել ռիսկային պատահարներ և կասկածելի գործարքներ,
- կիրառել կանխատեսողական վերլուծություն՝ կանխելու բարձր ռիսկայնությամբ իրադարձությունները,
- նվազեցնել մարդկային սխալի հավանականությունը և բարձրացնել ռիսկերի կառավարման ճշգրտությունը:

Բանկը շարունակական ներդրումներ է իրականացնում տեղեկատվական անվտանգության համակարգերի զարգացման և արդիականացման ուղղությամբ՝ ապահովելով միջազգային լավագույն փորձի համապատասխանություն, ինչպես նաև ուժեղացնելով առցանց զեղծարարության կանխարգելման և հակազդման միջոցառումները:

Թվարկված ռիսկերի գծով Բանկում գործող նորմատիվային դաշտը կարգավորվում է IDBank-ի ներքին և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված համապատասխան իրավական ակտերով:

30/06/2026թ. դրությամբ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն:

Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. IDBank-ի՝ 2026 թվականի առաջին կիսամյակի հաշվետվության մեջ ներառված տեղեկությունները ճշգրիտ են և լիարժեք, բոլոր էական առումներով համապատասխանում են իրավական ակտերով սահմանված պահանջներին:
2. 2026թ. առաջին կիսամյակի աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ:

Միեր Աբրահամյան

(Անուն, Ազգանուն)

Վարչության նախագահ

(պաշտոն)

Արման Ասատրյան

(Անուն, Ազգանուն)

Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն, Վարչության անդամ

(պաշտոն)

Կարեն Նալբանդյան

(Անուն, Ազգանուն)

Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ

(պաշտոն)

Արթուր Համբարձումյան

(Անուն, Ազգանուն)

Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ

(պաշտոն)

Անուշիկ Խաչատրյան

(Անուն, Ազգանուն)

Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ

(պաշտոն)

Սերգեյ Առաքելյան

(Անուն, Ազգանուն)

Թվային բանկինգի տնօրեն, Վարչության անդամ

(պաշտոն)

Լիլիթ Սարգսյան

(Անուն, Ազգանուն)

Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ

(պաշտոն)

Լիլիթ Գրիգորյան

(Անուն, Ազգանուն)

Գործառնական տնօրեն, Վարչության անդամ

(պաշտոն)

Վահան Յոլյան

(Անուն, Ազգանուն)

Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, Վարչության անդամ

(պաշտոն)

IDBank

info@idbank.am | +374 10 59 33 33

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից